

WILCO

Հաստատված է

«Վիլկո» ՍՊԸ

Միակ մասնակից

«Պարադեպլատց Լիմիթեդ» ՍՊԸ

Ի դեմս «Ալստերիս մենեջմենտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ստելա Մակրի կողմից



«25» օգոստոսի 2025թ.

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

1.1. «Վիլկո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ «**Ընկերություն**») Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գրանցված և լիցենզավորված ներդրումային ընկերություն է:

1.2. Ընկերության վավերապայմաններն են՝

1.2.1. Անվանումը՝ «**Վիլկո**» ՍՊԸ

1.2.2. Ներդրումային ընկերության լիցենզիա՝ **Համար 0008**

1.2.3. Հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան 0002, Մարյան փ. 26/2**

1.2.4. Կայք՝ **wilco.am**

1.3. Ընկերության հաճախորդների պատվերների կատարման սույն կանոնակարգում (այսուհետ՝ «Կանոնակարգ») օգտագործվող հասկացությունները, եթե դրանք սահմանված չեն Կանոնակարգում, մեկնաբանվում են այն նշանակությամբ, որը սահմանված է ՀՀ օրենքներում և դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում, իսկ վերջիններիս կողմից սահմանված չլինելու դեպքում կիրառվում է Կիրառելի օրենսդրությամբ և միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.4. Ընկերությունը այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ երբ պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում:

1.5. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի Հաճախորդի պատվերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և

WILCO

վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոնները:

1.6. Ընկերությունը պարբերաբար վերանայում է պատվերների կատարման գործընթացի արդյունավետությունը՝ այդ թվում՝ կիրառվող պատվերների կատարման վայրերի և մեթոդների գնահատումը՝ ապահովելու համար պատվերների կատարման լավագույն հնարավոր պայմանները:

1.7. Կանոնակարգի 1.5. կետում նշված գործոնների հարաբերական կարևորությունը կամ կարևորության աստիճանը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները՝

1.7.1. Հաճախորդի դասակարգումը՝ պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ,

1.7.2. Հաճախորդի պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առանձնահատուկ ցուցումները և այլն),

1.7.3. Հաճախորդի պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և ավն),

1.7.4. Գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները:

1.8. Պատվերները կարող են կատարվել ինչպես կարգավորվող շուկայում այնպես էլ դրանից դուրս:

1.9. Այն դեպքում, երբ պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են կարգավորվող շուկայում առևտրին, պատվերները կատարվում են կարգավորվող շուկայում: Չիսխտելով վերոնշյալ կարգավորումը՝ պատվերները Ընկերության կողմից կարող են իրականացվել չկարգավորվող շուկաներում:

1.10. Եթե պատվերի առարկա արժեթղթերը թույլատրված են առևտրին միաժամանակ մի քանի կարգավորող շուկայի օպերատորների համար, ապա պատվերը կատարվում է այն օպերատորի միջոցով, որի առաջարած պայմանները (գինը, ծախսերը, ժամկետը/արագությունը, պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը) ավելի լավն են, բացառությամբ այն դեպքի, երբ հաճախորդը իր առանձնահատուկ ցուցումներում նշել է այլ օպերատորի անուն:

1.11. Հաճախորդի կողմից ներկայացված հստակ և ամբողջական ցուցումների առկայության դեպքում Ընկերությունը կատարում է պատվերը այդ ցուցումներին համապատասխան՝ անկախ սույն Կանոնակարգով սահմանված ընդհանուր սկզբունքներից: Սակայն Հաճախորդի ցուցումների կիրառման հետևանքով հնարավոր ցանկացած բացասական հետևանքի պատասխանատվությունը կրում է Հաճախորդը:

WILCO

1.12. Տեխնիկական անսարքության, շուկայի ոչ հասանելիության կամ արտակարգ իրավիճակների դեպքում Ընկերությունը՝ ըստ ներքին ընթացակարգերի, ընդունում է բոլոր հնարավոր քայլերը Հաճախորդի շահերի առավելագույն պաշտպանության համար և տեղեկացնում է Հաճախորդին պատվերի կատարման հնարավոր ուշացումների կամ ձախողման մասին:

1.13. Ընկերությունը կարող է մերժել Հաճախորդի կողմից ներկայացված պատվերը հետևյալ դեպքերում՝

1.13.1. եթե պատվերը համարվում է թերի կամ պարունակում է սխալ տեղեկատվություն,

1.13.2. եթե պատվերի կատարման հետևանքով կարող է առաջանալ հակասություն օրենսդրության պահանջների կամ ներքին կանոնակարգերի հետ,

1.13.3. եթե առկա չէ բավարար իրավասություն կամ լիազորություն Հաճախորդի կողմից,

1.13.4. եթե Հաճախորդի հաշվում առկա չէ բավարար միջոց:

1.14. Ընկերությունը ապահովում է Հաճախորդների կողմից ներկայացված պատվերների, ինչպես նաև դրանց կատարման վերաբերյալ բոլոր տվյալների (ներառյալ՝ պատվերի ստացման, հաստատման, կատարման և մերժման ժամանակի, պատվերի բովանդակության և պատշաճության) գրանցումն ու առնվազն հինգ (5) տարի ժամկետով պահպանումը՝ էլեկտրոնային կամ նյութական ձևաչափով ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

